257 Ով սուրբ Արարիչ, Քո եկեղեցում

1. Ով սուրբ Արարիչ, Քո եկեղեցում
Իմ թշվառ հոգուն կյանք ես պարգևում,
Քրիստոնյա եմ, արդ հոգիս է ցնծում,
Ամբողջ երկրի վրա իմ երգն է հնչում:

Երբ Քո մեջ եմ ես,
Իմ մեջ ես, Տե՛ր, Դու,
Երբ Քեզ հետ եմ ես,
Ինձ հետ ես, Տե՛ր, Դու:

2. Տեր Հիսուսը այս կյանքի պայքարում
Ամեն մի քայլում ինձ է ուղեկցում,
Իսկ ճանապարհին, թե հանկարծ հոգնեմ,
Այնժամ այս ծանոթ երգը կերգեմ:

3. Երբ Քեզ համար, Տե՛ր, ինձ դատապարտեն,
Թեկուզ անծանոթ ափեր ուղարկեն,
Գիտեմ՝ այնտեղ էլ Քեզ կվայելեմ,
Հեռավոր երկրում այս երգը կերգեմ:

4. Հիսուսն է իմ մեջ, ուրախ եմ որքան,
Ես՝ հոգով Նրան կապված հավիտյան,
Արդ քրիստոնյա եմ, մենակ չեմ կյանքում,
Ամբողջ երկրի վրա իմ երգն է հնչում: